կայլին 'ի նոսա։ Սա 'ի պատերազմ դը-նացեալ մեռաւ մերձ 'ի Սուրհա։

Մակրինոս սկսաւ յամի Տեառն ՄԻ. ինքնակալեաց ամ մի։ Սա անարի գոլով՝ վասն նախանձու 'ի զօրաց իւրոց գլխատեցաւ. և ոմանք ասեն թէ՝ յորդւոյն իւրմէ նախանձու սպանաւ։

Ընտոնինոս երրորդ՝ սկսաւ յամի Տեառն ՄԻԸ. ինքնակալեաց ամս երեք՝ աղտեղի և զազիր։ Ի սորին ժամանակին յայտնեցաւ Հերձուածողն Սապելիոս։ Սա Ընտոնինոս՝ ամբոխմամբ զօրաց իւրոց սպանաւ ընդ մօր իւրոյ։

Աղեկսանդրոս սկսաւ յամի Տեառն ՄԻԴ. ինքնակալեաց ամս ԺԳ. և Օգոստոս կոչեցաւ։ Էր սա գազանաբարոյ յոյժ և Հերձուածող. սա զսուրբ պապն զԿալիքստոս՝ վասն ուղղափառ հաւատոյն՝ սպան։ Ի սորին ժամանակին փայլէ

Հայ մատենագրութեան թուանշային գրադարան